ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 680-Ա

«26» հունիսի 2024 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՍՆԵՐԵՔ ԿՏՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 26-ի թիվ 75-Ա, 2023 թվականի օգոստոսի 1-ի թիվ 110-Ա, 2023 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 198-Ա, 2024 թվականի մարտի 19-ի թիվ 60-Ա և 2024 թվականի մայիսի 21-ի թիվ 105-Ա որոշումները, որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման հավելվածով ըստ լոտերի ներկայացված հողամասերի օտարման նպատակով, 2024 թվականի հուլիսի 29-ին, ժամը 11:00-ին, Ախուրյանի համայնքապետարանի շենքում (հասցեն՝ Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան, Գյումրիի խճուղի, 42 շենք) կազմակերպել աճուրդ:

2.Աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ «Առավոտ» օրաթերթում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am պաշտոնական կայքէջում, Շիրակի մարզպետարանի պաշտոնական կայքէջում, Ախուրյանի համայնքապետարանի պաշտոնական կայքէջում հրապարակել հայտարարություն՝ սակարկությունների անցկացման տեղի, օրվա, ժամի, հողամասերի գտնվելու վայրի, չափերի, կադաստրային ծածկագրերի, մեկնարկային գների,

նախավճարների չափի, քայլերի չափի, օգտագործման նպատակի, ճանապարհների առկայության, հողերի որակական հատկանիշների, տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների մասին:

3.Հաստատել հրապարակային սակարկությունների հայտարարության տեքստը համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«26» հունիսի 2024 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի
ղեկավարի 2024 թվականի հունիսի 26-ի թիվ 680-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լոտի համարը	Հողամասի գտնվելու վայրը, հասցեն	Հողամասի ծածկագիրը	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը)	Հողամասի մակերեսը (հեկտար)	Օտարման նպատակը	Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (ՀՀ դրամ)	Աճուրդի նախավճարի չափը (ՀՀ դրամ)
1	ՀՀ ՇՄ Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Ջրաշինարարների փողոց, 7/2 հողամաս	08-007-0052-0062	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	0.00264	Ավտոտնակ կառուցելու համար	80000	40000
2	ՀՀ ՇՄ Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Գյումրու խճուղի, 11/10 հողամաս	08-007-0627-0055	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատման	0.0176	Առևտրի և սպասարկման օբյեկտ կառուցելու համար	265000	132500
3	ՀՀ ՇՄ Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Ջրաշինարարների փողոց, 6-րդ անցուղի 1/12	08-007-0051-0021	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	0.002944	Ավտոտնակ կառուցելու համար	86000	43000

	հողամաս							
4	ՀՀ ՇՄ Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Ջրաշինարարների փողոց, 4-րդ անցուղի 8/1 հողամաս	08-007-0050-0039	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	0.07	Բնակելի նշանակության շինություն կառուցելու համար	905000	452500
5	ՀՀ ՇՄ Ախուրյան համայնք, գյուղ Վահրամաբերդ, 23-րդ փողոց, 31 հողամաս	08-108-0022-0050	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	0.070796	Բնակելի նշանակության շինություն կառուցելու համար	415000	207500
6	ՀՀ ՇՄ Ախուրյան համայնք, գյուղ Հացիկ 9-րդ փողոց, 12 հողամաս	08-065-0036-0026	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	0.10399	Բնակելի նշանակության շինություն կառուցելու համար	563000	281500
7	ՀՀ ՇՄ Ախուրյան համայնք, գյուղ Հացիկ 9-րդ փողոց, 5/1 հողամաս	08-065-0035-0008	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատման	0.025525	Առևտրի և սպասարկման օբյեկտ կառուցելու համար	160000	80000
8	ՀՀ ՇՄ Ախուրյան համայնք, գ.Ախուրյան, Ջրաշինարարների փողոց, 4/14 հողամաս	08-007-0060-0009	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	0.03725	Բնակելի տուն կառուցելու համար	501000	250500
9	ՀՀ ՇՄ Ախուրյան համայնք, գ.Ախուրյան, Ջրաշինարարների փողոց, 4/12 հողամաս	08-007-0059-0048	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	0.1637	Բնակելի տուն կառուցելու համար	2025000	1012500

10	ՀՀ ՇՄ Ախուրյան համայնք, գյուղ Ոսկեհասկ, 97 հողամաս	08-092-0240-0097	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	Կապի	0.036	Կապի օբյեկտ կառուցելու համար	150000	75000
11	ՀՀ ՇՄ Ախուրյան համայնք, գյուղ Ոսկեհասկ, 19-րդ փողոց, 42/2 հողամաս	08-092-0069-0001	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատման	0.1	Հասարակական նշանակության շինություն կառուցելու համար	387000	193500
12	ՀՀ ՇՄ Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Տիգրան Մեծի փողոց, 1-ին անցուղի 9 հողամաս	08-007-0120-0014	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	0.06023	Բնակելի նշանակության շինություն կառուցելու համար	782000	391000
13	ՀՀ ՇՄ Ախուրյան համայնք, գյուղ Կրաշեն 6-րդ փողոց, 8/1 հողամաս	08-057-0006-0008	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	0.14509	Բնակելի նշանակության շինություն կառուցելու համար	367000	183500